Արձանագրություն N 2
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/15 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (e-AUCTION) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 28 հուլիսի 2026թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կ. Քոչարյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Մ. Մելիքսեթյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Հ. Ալեքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս. Այվազյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Կ. Քոչարյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. **ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/15** ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

2. ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/15 ծածկագրով հայտերի բացման մասին
(Կ. Քոչարյան)

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով: Գնման ընթացակարգի աճուրդը մեկնարկել է 2026 թվականի հուլիսի 28-ին, ժամը 15:30 և ավարտվել է 2026 թվականի հուլիսի 28-ին, ժամը 16:00:

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1	ԱՁ Ասատրյան Ռուզաննա Մանվելի	ՀՀ, ք. Երևան, Կողբի 2փ. 19, հեռ. +374 55 77 32 53, ruzanasatryan271@gmail.com
2	«Ֆենիքս Օն» ՍՊԸ	Ք. Գյումրի, Անկախության Հրապարակ, շ. 9Ա հեռ. +374 93199337 feniixon@gmail.com

3	«Իզիթեչ» ՍՊԸ	Ք. Երևան, Շարուրի 28/1, բն. 6 հեռ. +374 41 56 50 51 arakelyanrafayel3@gmail.com
4	«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ	Ք. Երևան, Աբովյան 29, 3-րդ տարածք Հեռ. +374 94 90 49 94 info@itech.am
5	«ՄՄՄ Տեխ» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 26/11 Հեռ. +374 77 02 20 80 mmmtecham@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0

3.Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին

(Կ. Քոչարյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթում Հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ Անհատ Ձեռնարկատեր Ասատրյան Ռուզաննա Մանվելի ներկայացրած փաթեթի՝ Հավելված 1-ում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Անհամապատասխանությունները շտկելու մասին

(Կ. Քոչարյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն՝ վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել Անհատ Ձեռնարկատեր Ռուզաննա Մանվելի Ասատրյան -ին:

Շտկումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ (eauction.armeps.am) համակարգի միջոցով, մինչև 30.07.2026թ. ժամը 17:00 ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Քոչարյան)

ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/15 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (eauction.armeps.am) միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար հայտերում

արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2026 թվականի հուլիսի 30-ին՝ ժամը 17:00-ին, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ Կ. Քոչարյան

գնահատող անդամներ՝ Մ. Մելիքսեթյան

բացող անդամներ՝ Հ. Ալեքյան

քարտուղար՝ Ս. Այվազյան